

Ա, 128), եւ մեզ ժամանակաւ՝ աշխարհով ու բարուք մերձաւոր Անտիոքացիք, որոց քով կը տեսնենք «զազգի ազգի համեմանսն ընդ միմեանս խառնեալս, զղարար եւ զչոր խորտկացի համադամս... եւ կէսք զառաջին հաւն կայծակամբք խորովեալ՝ լցեալ մանր ձկամբք՝ նախ հրամայեն բերել. եւ այլք այլ իմն սկիզբն օրինացն այնպիսի ընթրեաց առնեն» (Ոսկ. Մտթ. Բ, 69): Այս նկարագիրը, զոր հայ թարգմանիչը կրնար անշուշտ տոհմային խոհանոցին համար եւս կրկնել, ուշագրաւ է ոչ միայն կերակրոց յօրինուածով, այլ ճաշացուցակին ըստ կամս զանազանութեան կողմանէ եւս՝ զոր կը յիշէ:

20. — Եղանակ ձաշակման: — Ակնարկեցինք այլուր (աստ, 66) մեր նախնեաց այլ եւ այլ սկտեղներէ ուտելու սովորութեան, որ ծանօթ է գէթ ազնուական դասուն մէջ, մինչ Հրեայք մէկ անօթէ կը ճաշէին (աստ, 63. Վիգ. Ե, 1047): Մերը նման էր Հելլենաց ու Հռովմայեցոց կերպին, որոց քով ամէն սեղանորդ իւր բաժինը կ'առնուր հասարակաց ամանէն իւր պնակին մէջ, կամ ծառայք կը բաժնէին անոնց (Դար. Ա, 1274, '80): Արդ՝ հայ տաճարին ոտնկայ սպասաւորը (աստ, 134-5), — հաւանօրէն առաջնորդութեամբ